դառնալով Ս. Յակոբի վանքը կը շարունակէ իր պաշտօնը։ Իր կնոջ և որդւոյն մահէն յետոյ 1871ին կ'ընդգրկէ եկեղեցականութիւնը և կը շարունակէ նկարչութեան արուեստը. 1872-80ին կը վարէ Եգիպտոսի կալուածոց և Դամասկոսի տեսչութիւնները. Նե. Ռուսաստանի Շամախիի, Աստրախանի, Բեսսարաբիոյ եւ Նոր Նախիջևանի վիճակներուն (1881—85). եպս. կը ձեռնադրուի 1885ին, և Ս. Յակոբի վանքը վերադառնալով՝ կ'ըլլայ դարպասընկալ և միեւնոյն ժամանակ ուսուցիչ կրօնի և հայերէնի (1885—1903). Հրաւիրակ Յարութիւն պտրք. ի 1888ին. Տեսուչ Ժառ. վարժ. ի (1889—92). անդամ Տն. Ժողովի (1891—1905). մինչև վերջը հետևած է նկարչութեան և թողած է դանդաղ կրօնական պատկերներ։ Իր Նոր-Նախիջևան գտնուած ժամանակ նկարած է Հոգեգալստեան մեծադիր եւ չքեղ պատկեր մը զոր տեղւոյն Բարեգործական ընկերութիւնը իր 25ամեայ յոբելեանին առթիւ կը նուիրէ Ս. Խաչ վանքին։ (Լումայ, 1901, էջ 157). վախճանած է 1907ին։ Արքեպիսկոպոսութեան կոնդակը 1907ին կը հասնի յետ մահու։ Ս. Յակոբի վանքին յիշատակ կը թողու չորս մթերանոցներ, երկուքն Երուսաղէմի և երկուքն Յոպպէի մէջ։

Իր գրական գործերն են. 1° Աղօթագիրք Ս. Տեղեաց, (տպ. Երուսաղէմ, 1867). 2° Երկու խօսք եկեղեցւոյ պաշտօնէից ուղղուած, (տիպ. Երուսաղէմ, 1872). 3° Ամեն մարդու քարեկամը, (տպ. Երուսաղէմ, 1873). 4° Կեանքի առնուած փոքրիկ քարոյական պատմութիւններ, (տպ. Երուսաղէմ, 1891). 5° Երկու խօսք Ազգ. դասաւարութեան վրայ. 6° Ս. Երուսաղէմի Հայոց ազգային վանուց մասին տեղեկութիւններ. (տիպ. Ռոստով 1883). «Սիոն» ամսաթերթին մէջ ունի յօդուածներ եւ քերթուածներ։ Ինչպէս նաև Թէոդորոս Զուղայեցիին Եկեղեցի Հայաստանեայցին մէջ քարոզներ գրած է։ Կրօնական նիւթերու վրայ իր անտիպ աշխատութիւնները կը մնան Ս. Յակոբի վանքին ձեռագիրներու մատենադարանին մէջ։

ՄԱՄԲՐԷ ՎՐԴ. — Մբ. Զռ. 1862 ին։

ՄԱՄԲՐԷ ՎՐԴ. ԳԱԼՖԱՆԵԱՆ, ՋՄԻՒՌՆԻԱՑԻ.—Մբ. Ծ. 1890 ին. աշկ. Պէրութի Ֆրանսացւոց վարժ.ին. ուսուցիչ Ֆրանսերէնի Ժառ. վարժ.ի. Զռ. 1923ին. ժամարար Յոպպէի 1924ին. Հոգևոր հովիւ Մարսէյլի 1925 ին. այժմ կը պաշտօնավարէ յԱմերիկա։